ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 125-Ա

20 փետրվարի 2019թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց մրցույթները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և

սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ֆ. ՍԱՆՈՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2019թ. փետրվարի 20 -ի
N125-Ա որոշման

ՀՀ Գեղարքունիքի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց Մրցույթների ժամանակացույց

1. <<Նորատուսի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ. ապրիլի 23-ին, ժամը՝ 10^{30}-ին
2. <<Գանձակի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. ապրիլի 23-ին, ժամը՝ 14^{30}-ին
3. <<Լճափի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. ապրի 26-ին, ժամը՝ 10^{30}-ին
4. <<Վերին Գետաշենի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ. ապրիլի 26-ին, ժամը՝ 14^{30}-ին
5. <<Վարդենիկի ԱԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. ապրիլի 30-ին, ժամը՝ 10^{30}-ին
6. <<Վաղաշենի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	- 2019թ. ապրիլի 30-ին, ժամը՝ 14^{30}-ին
7. <<Լճաշենի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ. մայիսի 3-ին, ժամը՝ 10^{30}-ին
8. <<Ծովագյուղի ԲԱ>> ՊՈԱԿ	- 2019թ մայիսի 3-ին, ժամը՝ 14^{30}-ին
9. <<Ծակքարի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ	-2019թ. մայիսի 7-ին, ժամը՝ 10^{30}-ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԽԼՂԱԹՅԱՆ